ՀՏԴ 658

Ս.Ա. ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ, Ն.Ն. ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ

ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐՆ ԱՐԴԻ ՓՈՒԼՈՒՄ

(Վանաձոր)

Ներկայացված են ՀՀ-ում փոքր և միջին գործարարության զարգացման միտումները: Ցույց է տրված, որ համարվելով տնտեսական առաջընթացի հիմնական երաշխիք՝ այդ գործարարությունը ձևավորում է գործարարների որոշակի խավ, ստեղծում նոր աշխատատեղեր, խթանում շուկայում մրցունակ ապրանքների արտադրությունը, նպաստում արտադրական հզորությունների արդյունավետ օգտագործմանը:

Առանցքային բառեր. փոքր և միջին գործարարություն, մրցունակ ապրանքներ, շահույթ, ֆինանսական, տեղեկատվություն:

Վերջին շրջանում համաշխարհային տնտեսությունում ձևավորված միտումները պայմանավորված են փոքր և միջին գործարարության (ՓՄԳ) բուռն զարգացմամբ, որը կարևոր տեղն է գրավում ցանկացած երկրի տնտեսական, սոցիալական և քաղաքական գործընթացներում [1-4]: Զարգացած երկրների մեծ մասում բնակչության զգալի մասը զբաղված է փոքր և միջին գործարարարության ոլորտներում և տալիս է համախառն ներքին արդյունքի ավելի քան 60% [5,8,9]:

Ժամանակակից տնտեսական իրավիճակում «ՓՄԳ» զարգացումների անհրաժեշտությունը պայմանավորված է ինչպես ազգային տնտեսությունների տնտեսական աճի ապահովմամբ, շուկայական հարաբերությունների արմատավորմամբ, այնպես էլ տնտեսական աաջընթացի ապահովման գործոններով, որոնք համարվում են նրա զարգացման հիմնական երաշխիքները: Այն առավել հրատապ է հատկապես շուկայական տնտեսության անցման փուլում գտնվող երկրների համար, քանի որ ՓՄԳ-ն, ձևավորելով տնտեսության մասնավոր հատվածը, հնարավորություն է ընձեռում՝ կարճ ժամանակամիջոցում ստեղծել արդյունավետ գործող գործարարների մեծ խավ, զգալի թվով նոր աշխատատեղեր, ընդլայնել ներքին շուկայի ծավալները, խթանել արտաքին շուկայում մրցունակ ապրանքների արտադրությունը, նպաստել արտադրական հզորությունների արդյունավետ օգտագործմանը, ապահովելով տնտեսական աճի անհրաժեշտ մակարդակ ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շուկաներում:

Գրականության մեջ «գործարարություն» տերմինին որպես հոմանիշ շատ հաճախ օգտագործվում են «ձեռնարկատիրություն», «ձեռնարկություն», «արդյունաբերություն» հասկացությունները: «Փոքր ձեռնարկություն» (small business) տերմինը տարածում ունի միայն անգլախոս երկրներում: Մնացած արևմտաեվրոպա-

կան երկրներում և Ճապոնիայում ավելի հաճախ օգտագործվում է «փոքր և միջին ձեռնարկություններ», (small small and medium enterprises), իսկ Հնդկաստանում և մի շարք ասիական երկրներում՝ «փոքր չափի արդյուանբերություն» (small scabe industry) տերմինները, որոնք, ըստ էության, ունեն միևնույն բովանդակությունը: Դրանց համար տարբեր երկրներում սահմանվում են նաև տարբեր չափորոշիչներ [6,7]: Օրինակ՝ ԱՄՆ-ում «փոքր բիզնեսը» այն ձեռնարկություններն են, որոնք չեն զբաղեցնում գերիշխող տեղ շուկայում և ունեն 500-ից ոչ ավելի աշխատողներ: Որոշ երկրներում գործում են սահմանման այլ չափորոշիչներ:

Ըստ ՀՀ-ի քաղաքացիական օրենսգրքի՝ ձեռնարկատիրական գործունեությունը սահմանվում է հետևյալ կերպ. «Ձեռնարկատիրական է համարվում անձի ինքնուրույն, իր ռիսկով իրականացվող գործունեությունը, որի հիմնական նպատակը գույք օգտագործելուց, ապրանքներ վաճառելուց, աշխատաքներ կատարելուց կամ ծառայություններ մատուցելուց շահույթի (եկամտի) ստացումն է»: Այս սահմանմամբ նախատեսվում են նաև որոշակի պայմաններ, որոնց առկայության դեպքում միայն տվյալ գործունեությունը կարող է հանդիսանալ ձեռնարկատիրական գործունեություն:

Մեր կարծիքով, փոքր և միջին ձեռնարկատիրությունը կամ գործարարությունը շահույթ հետապնդող գործունեություն է, որն իրականացվում է շուկայական տնտեսության սուբյեկտների կողմից որոշակի ցուցանիշներից ելնելով, որոնք սահմանվում են պետության օրենքով և այլ օրենսդրական նորմատիվ ակտերով:

Շուկայական տնտեսությանն անցման շրջանում գտնվող երկրներում էլ ավելի է մեծանում պետության միջամտությունը ՓՄԳ ոլորտի զարգացման գործում, հատկապես ֆինանսական, իրավական, տնտեսական աջակցության ընդհանուր ցանցի ստեղծման ուղղություններում: Գործարարության պետական կարգավորումը այդ փեռնարկություններին աջակցելու ընդլայնված ցանցի ստեղծումը և ընդգրկումն է երկրի տնտեսության մեջ, ինչն արդեն մի քանի տասնամյակ է, որ հաջողությամբ իրականացվում է տարբեր երկրներում, ինչպես նաև Հայաստանում:

Հայաստանի Հանրապետությունում ՓՄԳ զարգացման նպատակով իրականացվող քաղաքականությունն է.

1. ՓՄԳ-ների քանակի ավելացման և դրանց գործունեության բնագավառների ընդլայնման համար ստեղծվում են ֆինանսական, տեղեկատվական և խորհրդատվական ծրագրեր:

2. Սպառողների և մատակարարողների միջև ավելի կայուն հարաբերությունների ձևավորման նպատակով կնքվում են ենթակապալային պայմանագրեր,

որոնք ՓՄԳ-ներին հնարավորություն են տալիս օտվել մեծ ֆիրմաների տեխնոլոգիական և կոմերցիոն «know - how» (իմանալ ինչպես) ծրագրերից:

3. Արտադրանքի արտահանման ծավալների ընդլայնումն իրականացվում է բազմաթիվ խոչընդոտների վերացման ճանապարհով, որոնք առաջանում են տարբեր երկրների միջև սահմանային առևտուր իրականացնելիս:

4. Ֆինանասական միջոցներից օգտվելու հնարավորությունն օգտագործելով, ստեղծվում են վարկային երաշխիքների տրամադրման մեխանիզմներ՝ սուբսիդիաների կամ ինվեստիցիաների, արտոնյալ վարկերի կամ դոտացիաների ստացման համար:

5. ՓՄԳ-ները դիտելով որպես նոր աշխատատեղերի ստեղծման հիմնական աղբյուր՝ պետության հիմնական խնդիրն է համարվում աշխատանքի ազատ շուկայի ստեղծումը և կադրերի պատրաստման համակարգի կարգավորումը:

Կարևորելով ՓՄԳ-ների դերը երկրի տնտեսության զարգացման, նոր աշխատատեղերի սետղծման, միջին խավի ձևավորման, բնակչության կենսամակարդակի բարձրացման և երկրում սոցիալական-քաղաքական կայունության ապահովման գործում՝ ՀՀ-ում իրականացվող ծրագրերը խթանում են նաև երկրի հատկապես հեռավոր ու սահմանամերձ բնակավայրերի տնտեսական զարգացումները, ինչը համարվում է կառավարության տնտեսական քաղաքականության ռազմավարական և գերակա ուղղություններից մեկը [2,9]:

Ըստ 2014 թվականի վճակագրական տվյալների, ՓՄԳ-ները կողմից թողարկված արտադրանքի քանակի տեսակարար կշիռը երկրի համախառն ներքին արդյունքում կազմել է ավելի քան 45%: Նրանց կողմից հարկերի, տուրքերի և պարտադիր այլ վճարների տեսքով պետական բյուջե է վճարվել պետական բյուջե վճարված հարկերի շուրջ 30%, իսկ պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների տեսակարար կշիռը վճարված պարտադիր սոցիալական ապահովագրության ընդհանուր վճարներում կազմել է ավելի քան 40% [4]:

Ներկայումս ՓՄԳ զարգացումը տեղափոխվել է որակապես նոր փուլ: Պետության կողմից ձևավորվում և ընդլայնվում են ՓՄԳ սուբյեկտներին ցուցաբերվող տեխնիկական, ֆինանսական աջակցության ծավալներն ու աշխարհագրությունը, կատարելագործվում են դրանց տրամադրման մեխանիզմներն ու ընթացակարգերը: Այս զարգացումների համատեքստում կարգավորվում է միջազգային և օտարերկյա ծրագրերի ակտիվ ներգրավումը Հայաստանում ՓՄՁ զարգացման և ծրագրերի մշակման և իրագործման գործընթացում:

Այսպես, տարբեր երկրների հետ ձեռք բերված պայմանավորվածությունների շրջանակներում՝ ՀՀ-ի առանձին մարզերում աշխատանքներ կիրականացվեն միջազգային պրակտիկայում կիրառվող մեխանիզմների և տնտեսական մի

շարք մոդելների ձևավորման և ներդրման համար: Համագործակցություն կիրականացվի Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալության ՄԱԿ-ի զարգացման ծրագրի, ձեռնարկությունների Եվրոպական ցանցի, Հոլանդիայի «Զարգացող երկրներից ներմուծման խթանման կենտրոնի» և «Համագործակցության զարգացում» ծրագրի և այլ կազմակերպությունների հետ:

Սակայն ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ՓՄԳ սուբյեկտները դեռևս բախվում են օբյեկտիվ և սուբյեկտիվ մի քանի հիմնախնդիրների, որոնք պայմանավորված են ինչպես ՓՄԳ սուբյեկտների համար ֆինանսական միջոցների անմատչելիությամբ, գործարար տեղեկատվության ստացման ու կադրերի մասնագիտական ուսուցման մի շարք հարցերում առկա դժվարությունների, այնպես էլ նրանց կողմից թողարկվող արտադրանքի շուկաների ձեռքբերման հետ կապված խնդիրներով և գործարար հմտությունների պակասով:

Նշված խոչընդոտները հնարավոր է մեղմացնել հետևյալ միջոցառումների մշակման և ներդրման ճանապարհով՝

- ՓՄԳ սուբյեկտների գործունեությունը գնահատող մարզային ցուցանիշներ սահմանելու միջոցով,
- սկսնակ գործարարների համար գործարարություն ծավալելու նպատակով՝ բարձրացնել նրանց հմտությունը և լրացնել ֆինանսական միջոցների պակասը՝ դոտացիաների և սուբսիդիաների տրամադրման և այլ միջոցներով,
- գործարար տեղեկատվության և խորհրդատվության ստացման և կադրերի մասնագիտական ուսուցման հարցերում առկա դժվարությունները մեղմելու ճանապարհով,
- ՓՄԳ սուբյեկտների կողմից թողարկվող արտադրանքի շուկաների ներգրավման գործընթացներում առաջացող խնդիրները ժամանակին լուծելու եղանակով,
- ՓՄԳ զարգացման ծրագրերի մշակման և իրականացման գործընթացները մարզերում և համայքներում ժամանակին կենսագործելու միջոցով,
- շուկայական և արտարժութային ռիսկերի ապահովման և կառավարման հետ կապված բարդությունները մեղմելու միջոցով:

Ներկայիս ՓՄԳ ոլորտը ՀՀ տնտեսության մեջ պետք է դիտարկել նաև համաշխարհային ֆինանսական տնտեսական ճգնաժամի պայմաններում, որն իր ազդեցությունն է թողնում ինչպես զարգացած, այնպես էլ զարգացող երկրների տնտեսությունների վրա: Համաձայն «Տնտեսություն և արժեքներ» հետազոտական կենտրոնի կողմից իրականացված հետազոտության արդյունքների՝ Հայաստանի 60 մեծ և փոքր ձեռնարկությունների շուրջ 90 %-ը զգացել է ֆինանսատնտեսական ճգնաժամի բացասական հետևանքները: Դրանց միայն 5 % է

կարծիք հայտնել, որ ճգնաժամի բացասական ազդեցությանը չեն ենթարկվի: Հարցված ձեռնարկությունների 70 %-ի խնդիրները կապված են եղել վաճառքի ծավալի կրճատման, վճարումների ուշացման կամ չկատարելու հետ: 30%-45%-ի տոկոսը դժվարացել է կարծիք հայտնել ֆինանսների ճգնաժամի հարցում:

Որպես ճգնաժամի դիմակայման միջոց՝ ձեռնարկությունների գերակշիռ մասը պատրաստվում է կրճատել վարչական ծախսերը և հետաձգել ներդրումների իրականացումը: Աշխատակիցների թվի կրճատում է նախատեսում հարցված ընկերությունների 40 %: Աշխատավարձի կրճատում է սպասվում հատկապես արդյունաբերական ընկերությունների շուրջ 20 %-ում: Այդուհանդերձ, ձեռնարկությունները փաստել են, որ ճգնաժամն ունեցել է նաև դրական հետևանքներ, քանի որ թուլացել են մրցակիցների դիրքերը, նվազել՝ հումքի և սարքավորումների գները:

Քանի դեռ շարունակվում է ֆինանսական ճգնաժամը, անհրաժեշտ է մարզերում և համայնքներում հաճախակի ուսումնասիրությունների առարկա դարձնել նաև հետևյալ խնդիրները.

- Ուսումնասիրել գործարարության տարածքային միջավայրը և ներկայացնել վերջինիս բարելավման ուղիները տնտեսության բոլոր ոլորտներում:
- Հետազոտել և բացահայտել ՓՄԳ-ի զարգացման միտումներն ու հիմնախնդիրները՝ ելնելով տարածքային առանձնահատկություններից:
- Պարբերաբար գնահատել ՓՄԳ ոլորտի դերը ՀՀ տնտեսության զարգացման գործում՝ ըստ մարզերի:

Մեր կարծիքով, փոքր և միջին գործարարության զարգացման բնագավառում ամենամեծ դժվարությունները ոչ այնքան կապիտալի փոքր ծավալները, դրա կուտակման ցածր տեմպերը, ժամանակակից տեխնոլոգիաներն ու սարքավորումներն են, որքան սոցիալ-տնտեսական զարգացման ավանդույթների և քաղաքական, իրավական ու կազմակերպչական համակարգերի ոչ լիարժեք ձևավորումը: Բացի այդ, փոքր և միջին գործարարության աջակցության և պետական հովանավորչական քաղաքականության վարման նպատակով անհրաժեշտ է կատարել նաև դրանց դասակարգումը՝ համապատասխան չափանիշների ընտրության եղանակով: Նպատակահարմար է որպես դասակարգման չափանիշներ ընդունել ձեռնարկությունների աշխատողների թվաքանակը, գործազուրկների թիվը, արտահոսքը, հիմնական ֆոնդերի արժեքը, ավելացված արժեքը և համախմբելով դրանք՝ ստանալ մեկ ընդհանրական չափանիշ:

Գործարարության զարգացման նպատակով շատ կարևոր է նաև ապահովել բարենպաստ մրցակցային միջավայր: Այդ նպատակով անհրաժեշտ է մշակել և իրականացնել նաև տնտեսության ապամենաշնորհման համալիր ծրագիր

և հակամենաշնորհային խիստ օրենսդրություն, որն էլ կհանդիսանա փոքր և միջին գործարարության շահերի պաշտպանության գլխավոր երաշխիքը: Առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձնել ՓՄՁ զարգացման մարզային և տարածքային ծրագրերի մշակմանը և նրա ժամանակին իրականացման կարևորագույն խնդրի:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Բաբայան Է.Ա., Կարապետյան Հ.Վ.** Փոքր բիզնես. Կարևորությունը ազգային տնտեսության զարգացման գործում. – Եր., 2003.
2. ՀՀ Կառավարության «Հայաստանի փոքր ու միջին ձեռնարկատիրության զարգացման քաղաքականության և ռազմավարության հիմնադրույթները». - Եր., 2000. - 9 էջ:
3. **Մխիթարյան Ն.** Վենչուրային կապիտալը որպես բիզնեսի ֆինանսավորման այլընտրանքային աղբյուր // Հայաստանի ֆինանսներ և էկոնոմիկա. - 2007. - N2.
4. **Էվինյան Ը.** Ձեռնարկության էկոնոմիկա,ուսումնական ձեռնարկ. - Եր.: Տնտեսագետ. - 2007. - 121 էջ:
5. Малый бизнес в системе предпринимательства. - М.: Интерпринт, 2001. 765 с.
6. Малый бизнес в Западной Европе. – М., 2001. - 12 с.
7. Commission of the European Communities implementing the Community Lisbon Programe: Financing SME Growth-Adding Europen Value, 2006.
8. www.armstat.am
9. www.evca.com

С.А. САРУХАНЯН, Н.Н. МЕЛИКСЕТЯН

ТЕНДЕНЦИИ РАЗВИТИЯ МАЛОГО И СРЕДНЕГО ПРЕДПРИНИМАТЕЛЬСТВА НА СОВРЕМЕННОМ ЭТАПЕ

Представлены тенденции развития малого и среднего предпринимательства в РА, что обусловленные их быстрым развитием и занимает важное место в экономическом, социальном и политическом развитии любой страны. Показано, что предпринимательство, будучи основным залогом экономического прогресса, формирует определенный класс предпринимателей, создает значительное количество новых рабочих мест, стимулирует производство конкурентоспособной продукции, содействует эффективному использованию производственных мощностей для обеспечения экономического роста.

Ключевые слова: малое и среднее предпринимательство, конкурентоспособная продукция, доходы, финансовый, информация.

S.A. SARUKHANYAN, N.N. MELIKSETYAN

DEVELOPMENT TRENDS OF SMALL AND MEDIUM ENTREPRENEURSHIP AT THE PRESENT STAGE

The tendencies in small and medium business in Armenia are presented, which is due to their rapid development, which occupies an important place in the economic, social and political development of any country. It is shown that entrepreneurship, being the main guarantee of economic progress, forms a certain class of entrepreneurs, creates a significant number of new jobs, stimulates the production of competitive products, promotes the effective use of production facilities to ensure economic growth.

Keywords: small and medium business, competitive products, revenues, financial information.

ՀՏԴ 621.034

Վ.Շ. ԳՐԻԳՈՐՅԱՆ, Մ.Ս. ՄԱՄՅԱՆ, Խ.Ն. ՀԱԿՈԲՅԱՆ, Բ.Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ

ՄԵՔԵՆԱՄԱՍԵՐԻ ՋԵՐՄԱՄՇԱԿՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՏՈՒԿ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՒԼՏՐԱՁԱՅՆԱՅԻՆ ԷՄՈՒԼԳԱՑՄԱՄԲ

Ցույց է տրված, որ յուղ-ջուր համակարգի ուլտրաձայնային էմուլգացմամբ ջերմամշակման համար կարելի է ստանալ անհրաժեշտ հատկություններով բանվորական հեղուկներ, որոնց տեսակարար ջերմունակությունները գտնվում են յուղի և ջրի տեսակարար ջերմունակությունների միջակայքում: Հաստատված է, որ ուլտրաձայնային էմուլգացման ընթացքում որոշակի ժամանակահատվածում առաջացած երկու տիպի էմուլսիաների տեսակարար ջերմունակությունների որոշման համար բավական է իմանալ էմուլգացումից հետո դրանց ծավալները, բաղադրիչ հեղուկների տեսակարար ջերմունակությունները, խտությունները և այդ էմուլսիաներից որևէ մեկի զանգվածը:

Առանցքային բառեր. ուլտրաձայն, էմուլգացում, էմուլսիա, ջերմամշակում, տեխնոլոգիական միջավայր, տեսակարար ջերմունակություն:

Ներածություն: Մեքենաների որակի շարունակական բարելավումը, արտադրողականության, հուսալիության և երկարակեցության աճը հիմանականում պայմանավորված է տեխնոլոգիաների առաջընթացով, որի կարևորագույն փուլերից մեկը ջերմամշակումն է, որով ձևավորվում են մետաղների վերջնական շահագործման հատկությունները [1]: Ջերմամշակման գործընթացների կատարելագործումը նյութերի ճիշտ՝ կոնկրետ աշխատանքային պայմաններից բխող ընտրության հետ մեկտեղ կրճատում է իրերի նյութատարությունը, դրանց